Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք

Հոդված 189[7].
Տեղեկություն տալու պարտականությունը չկատարելը

Օրենքով նախատեսված տեղեկությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից ապօրինաբար չտրամադրելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Հոդված 254.
Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը

2-րդ մաս
Արձանագրություն չի կազմվում սույն օրենսգրքի … 189[7] հոդվածներով … նախատեսված դեպքերում: (Այսինքն, տեղեկատվության ազատության իրավունքը խախտած պաշտոնյային պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ չէ դատարան ներկայացնել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն):